



ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆՅԱՆ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ¹

13. ՆՈՐ-ԽԱՐԲԵՐԴ (ՆՈՐ-ԿՅԱՆՔ ԱՎԱՆ)

Նոր-խարբերդը, պաշտոնական անունով Նոր-Կյանք ավանը, գտնվում է Երևանի մոտ, դեպի Արտաշատ տանող բանով խճուղու եզերքին:

Նոր-խարբերդը հիմնադրվել է 1927 թվականին, Սովետական Հայաստանի կառավարության հատուկ հոգատարությամբ, ընդառաջելով արտասահմանի Համախարբերդցիական հայրենակցական միության ցանկության: Ավանը, սակայն, մեծապես աճել ու բարգավաճել է վերջին 5—6 տարվա ընթացքում: Սովետական կառավարությունը բազմաթիվ հայրենադարձ ընտանիքների տվել է երկարատև վարկ ու շինանյութեր, և նրանք մի քանի ամսվա ընթացքում ավանում կառուցել են գեղեցկատեսիլ տուֆակերտ տներ, շքեղ ու լուսավոր:

Հարուստ է Նոր-Կյանք ավանի Մայիսի 1-ի անվան կոլտնտեսությունը, ինչպես հարուստ և ունևոր են Սովետական Հայաստանի բոլոր կոլտնտեսությունները:

Նոր-խարբերդի հողերից անցնում է Հայաստանի ամենամեծ ջրանցքներից մեկը՝ Ստալինյան ջրանցքը, որը ձգվում է Երևանից մինչև հեռավոր բերքառատ Արտաշատ:

և ոռոգում իր ճանապարհի վրա գտնվող ընդարձակ դաշտերը:

Բնակչության բարեկեցության խոշոր նպաստ է բերում նաև Նոր-խարբերդի Միկոյանի անվան մանվածքա-գործվածքային արտելի ֆաբրիկան, որն ունի մետաքսեղեն ու բամբակեղեն արտադրող և կարի բաժիններ: Ըն ալստեղ տեսա մանվածքի համար ստացված «ճերմակ ոսկին» Ջանգիրասարի բամբակը, որ ավելի սպիտակաթել ու մաքուր է, քան Ադանայի (Կիլիկիա) բամբակը:

Ինչպես սույն ֆաբրիկայում, նույնպես և խոր-Ջորի բուսաբանական հիմնարկում, որտեղ մշակում են պտղատու, դեղադարձող և դաշտապաշտպան անտառաշերտերի համար միլիոնավոր ծառերի տնկիներ, աշխատում են բազմաթիվ բանվորներ:

Նոր-խարբերդի արևելյան ծայրամասի թաղն է Նոր-Կեսարիան, որի մոտիկ է առողջապահական ամեն տեսակ հարմարություններով օժտված Հաշմանդամների տունը՝ ծերանոցը: Ավանն ունի բուժարան, միջնակարգ դպրոց, որի տնօրենն է շմշկաժապցի Համբարձում Գասպարյանը, փոստ, որի վարիչն է տիկին Թևրիգյանը, մանկամսուր և մանկապարտեզ, որոնց վարիչն է տիկին Ռեբեկա Հակոբյանը՝ կողակիցը գյուղատվերի նախագահ հյուսենիկցի Արամ Հակոբյանի: Տիկին Ռեբեկան, առաջին օրից մինչև այժմ, խղճամիտ և հոգածու վերաբերմունք

1. Երառվակված ամսագրի 1952 թվականի հուլիսի, օգոստոսի, սեպտեմբեր-հոկտեմբերի և նոյեմբեր-դեկտեմբերի համարներից:

է ցուցաբերել իր գործին, իր խնամքին ու դաստիարակության հանձնված երեխաների հանդեպ:

Համաժողովրդային շինարար աշխատանքի շնորհիվ Նոր-Խարբերդը մոտիկ ապագայում ունենալու է նաև իր սառնորակ ըմպելի ջուրը, Գառնիի ջրից: Մինչև Սովետաշեն, 9 կիլոմետր երկարությամբ ջրմուղի խրամատի բացման հողային աշխատանքը կատարվել վերջացել է արդեն կոլտնտեսականների համատեղ ջանքերով, իսկ ջրի խողովակները կտրամադրվեն պատկան իշխանությունների կողմից:

— Հին Խարբերդի հիշատակը վերածնված Սովետական Հայաստանի մայրաքաղաքում հողի վրա հավերժացնելու նպատակով հիմնադրված Նոր-Խարբերդը, Սովետական կառավարության հողատարությունների և կոլեկտիվ տնտեսության շնորհիվ դառնում է ռեսպուբլիկայի գյուղատնտեսական բարգավաճ կենտրոններից մեկը, — ասում է կոլտնտեսական Նշան Տեր-Պետրոսյանը: Նա անցյալ տարի հսկայական եկամուտ է ունեցել իր աշխօրերի դիմաց, խնամքով մշակում է նաև իր տնամերձ այգին: Մենք տեսնում ենք այնտեղ դեռևս հողի տակ թաղված խաղողի որթատունկերը, թթենիներն ու ծիրանենիները, տանձենիներն ու բալենիները, խնձորենիներն ու փշատենիները և այլ պտղատու ծառերը:

Կանգ ենք առնում կամարածև սարփինայի տակ, որի վրա հանդուցված են որթատունկի ձյուղեր:

— Սա փորձի համար է, — ասում է փորձառու կոլտնտեսականը: — Եթե արիշի վրա այս ձևով և ձյուղերից անվտանգ դուրս դան և զարնան վերափոխեն այս ձյուղերը, նշանակում է, որ նրանք ցրտադիմացկուն են և հետագայում կարիք չկա նրանք թաղելու կամ ծածկելու: Այդպիսով ոչ միայն աշխատանքի խնայողություն կլինի, այլ նաև ապահովված՝ խաղողի առատությունը, որովհետև արիշի վրա բարձրացած որթատունկի երկարածիք ձյուղերը ընդունակ են ամելի բազմաթիվ, ավելի մեծ և ավելի բազմահատիկ յուղուղեներ տալու:

Ես հետաքրքրվեցի լսում եմ այդ շարքային կոլտնտեսականին և ակամայից մտածում, թե այդ ինչպես ու ինչքան է զարգացել հայ գյուղացին, սովետական նոր մարդը:

— Սրանք էլ մայիսյան վարդեր են, — շարունակում է նա՝ ցույց տալով կարճահասակ վարդենիների անհամար տնկիները, որոնք համարյա անանցանելի ցանկապատ են կազմել հողամասի ամբողջ հարավային սահմանի վրա, բացի շրջափակի պատից:

«Եթե այստեղ լինեինք գարնանը», —

հիացմունքով մտածում եմ ես: Բայց գեղեցիկ է այստեղ նաև աշնանը, Հայաստանի ոսկեմազ, հարուստ, կախարդիչ աշունը: Ես մոտիկ պատկերացնում եմ պտուղների տակ թաքնված ձյուղերը, արևի տակ փայլվող խաղողի հակնթյա հատիկները... Մտքերս ընդհատում է զրուցակիցս՝ Նշանը, որ օրինական հպարտությամբ ցույց է տալիս իր հարուստ տնտեսությունը:

— Այդ բնակարանը, իր տնամերձ հողամասով, Հալեպից ներգաղթած Ասուր Ֆերմանյանինն է, այս՝ Սարգիս որդու, մյուսը՝ աղջկանս, երկուսն էլ այստեղ ամուսնացած և զավակի տեր: Մեծ տղաս՝ Կարոն, երկու տարի է ինչ կրաժշտության դասատու է Ալավերդու միջնակարգ դպրոցում իր կնոջ հետ, որը դաշնամուրի ուսուցչուհի է: Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի 35-րդ տարեդարձին նվիրված օլիմպիադային մասնակցող և բավական լավ կազմակերպված լինելուն համար գնահատված խմբերից մեկն էր Կարոյի ղեկավարած Ալավերդու երգեցիկ խումբը, — ասում է Նշանը, և ես նրա աչքերի մեջ նկատում եմ իր հարազատների կատարած աշխատանքից գոհ ու երջանիկ հոր հպարտությունը:

Նշանը մեկն է այն բազմաթիվ հայերից, որ կրել է օտարության դառնությունները, թափառել տեղից տեղ, հիասթափվել «իրկարար» Արևմուտքից, ոտքերի փոշին թոթափելով հեռացել կապիտալիստական Ամերիկայի հողից... Ի վերջո հասել է երջանկության կայանը, տարիներով երազած խաղաղ ու երջանիկ կյանքի երկրին, երբ 1946 թվականին ներգաղթել է մայր Հայրենիք՝ Սովետական Հայաստան:

Նշանի հետ մենք եղանք նաև տիկին Վարդուհի Հոթիկյանի մոտ: Մենք մոտ մի ժամ զրուցեցինք նրա հետ: Տիկինը հիշեց մեծանուն խարբերդցուն՝ Կիլիկիո կաթողիկոս լուսահոգի Սահակ Բ Խաչապանցին (եղեցի), որի ծերության վերջին տարիների պահպան հրեշտակն էր եղել Անթիլիասում: Նրա որդին՝ Զավենը, Ֆրանսերեն լեզվի ուսուցիչ է Երևանի 26 կոմունարների անվան միջնակարգ դպրոցում, իսկ հարսը՝ հայոց լեզվի և անգլերենի դասատու է:

Արևը դեպի մայրամուտ էր թքվել: Մեծ Մասիսն իր ստվերն էր ձգել Փոքր Մասիսի վրա: Ամպի փոքր ծվեններ լողում էին ոսկեգույն ճաճանչների մեջ: Դաշտերում արածող անասուններն սկսել էին բռնել գոմերի ճամբան: Խճուղու վրա շրջապայելու ելած մանկամարդ աղջիկներ երգելով դառնում էին իրենց աները: Եվ ահա եկավ ավտորուսը, լի ուղեորներով, ինձ էլ առավ ու տուրավ դեպի Երևան:

14. ՍՈՎԵՏԱՇԵՆ

Անցնելով Արևելյան-Արեշի միջով, կարմրահող բլրի կողքից, ավտոբուսը ուղրապտույտ սլանում է խճուղու վրա, որը ոչ մի նմանություն չունի Արտաշատի խճուղու հետ: Սովետաշենի խճուղին, Արեշից սկսյալ, բարձրանում է երբեմն բլրակների կողքերի վեր, երբեմն իջնելով ցածր՝ ձորակներն ի վայր, նորից օձապտույտ գալարվելով բարձրանալու և ի վերջո մտնելու համար

Մասիսների դիմաց, Արաքսի հովտին բարձրից նայող այս դարավանդի վրա:

Տեսնելով Սովետաշենի հայրենադարձ բնակիչների կառուցած մի քանի հարյուր քարաշեն տները, բերրի հանդերն ու տնամերձ այգիները, միտս եկավ արտասահմանի հին մտավորականներից մեկի, հանգուցյալ հողագետ Ծ. Գ. Աղաթունի հետևյալ ճշգրիտ խոստովանությունը. «Մենք, որ տա-



Սովետաշենի դպրոցը

Մասիսին նայող մի բարձրավանդակի վրա հիմնադրված Սովետաշեն ավանի մեջ:

Այդ ավանը ինձ հիշեցնում է դատապարտելի ժլատությունը արտասահմանյան հայ մեծահարուստների, որոնք անցյալում Հայաստանում կառուցվելիք ավանի օգտին կատարված հանգանակության մասնակցում էին շատ չնչին գումարներով: Դա 1926—1931 թվականներին էր: Բարեբախտաբար ավանի շինարարական աշխատանքները ստանձնեց Հայաստանի կառավարությունը և Սովետաշենը մարմին առավ, իրականություն դարձավ, ծաղկեց ու բարգավաճեց

րիներն ի վեր կհետևինք Հայաստանի մեջ եղածին, շենք կրնար մեր հիացումը չարտահայտել մեր Հայրենիքին ներկա վարիչներուն, և մեր երախտագիտությունը կուղղվի նաև Մոսկվայի բոլշևիկ մեծ վարիչներուն, որոնք իրենց բարյացակամ պաշտպանությանը կարելի ըրած են Հայաստանի գոյությունը, նյութական հսկա զոհողությանց առջև չընկրկելով մեր սիրելի Հայրենիքի վերաշինության համար: Մենք, գաղթական հայերս, պետք է գիտնանք խոստովանիլ և գնահատել այն անսահման ծառայությունները, զորս բոլշևիկները ըրին մեր Հայրենիքին»:

Սրանից մոտ քառորդ դար առաջ, մի հայ մտավորականի կողմից Սովետական Միության վարիչների նկատմամբ արտահայտված երախտագիտությունը ներկայումս, ի բաց առջալ ցանցառաթիվ դավաճաններից, արտասահմանի ողջ հայությունն անկեղծ զգացմունքներն է արտահայտում, որովհետև յուրաքանչյուր հայի խորը համոզմունքն է այլևս, որ վերածնված Հայաստանի ծոցում հիմնվել, ծաղկել, բարգավաճել են Սովետաշենի նման բազմաթիվ մեկը մյուսից մեծ ու շեն ավաններ, միայն և միայն շնորհիվ Սովետական կառավարության ամենօրյա հոգատարության:

Սովետաշենի կենտրոնական ընդարձակ հրապարակի ամենաաչքառու շենքն է միջնակարգ դպրոցը: Նրա դիմացը, մի դեղեցիկ ծառաստանի մեջ ուշադրությունը է գրավում մանկատան գեղեցիկ սպիտակ շենքը: Ավելի կամ նվազ հեռավորության վրա գտնվում են մանկապարտեզը, մանկամոտորը, ակումբը, բուժարանը և հասարակական այլ հիմնարկներ:

Բնակչության բարեկեցության մեծապես սատարում են տեքստիլ-տրիկոտաժի և կոշկակարային արտեղները:

Ես չափից դուրս ուրախացա տեսնելով, որ Դորայի (Բելյուս, Անդրնահր) փողոցի վրա «Սիմա» կոչված փողոցիկ խանութում, հոր ձեռքի տակ կոշկակարություն սովորող Ասատրյան (Չալգուշյան) Անդրանիկը, այժմ, Հայաստանում, Սովետաշեն ավանի Սոցարշավ կոշիկի արտելի անվանի բաժանմունքի վարիչներից մեկն է դարձել: Նրա հետ է նաև իր մեկ թույլը:

— Անդրանիկս, — ասում է Սոցարշավ արտելի գանձապահ Պետրոս Չալգուշյանը, — Հայաստանի Թեթև արդյունաբերության մի նիստրության կոշիկի տեխնիկումում չորս տարի սովորելով, հիանալի մասնագիտացավ իր արհեստին: Ավագ դուստրս՝ Լուսինը, Ֆրանսերենի դասատու է Սովետաշենի դպրոցում և միաժամանակ սովորում է Հեռակա մանկավարժական ինստիտուտում. կրտսերս՝ Աստղիկը, այս տարի ավարտում է Երևանի № 45 տասնամյա դպրոցը:

Իմ խոսակիցը խանդավառվել էր իր հարգատ դավանների փայլուն ապագայով: Այդ խանդավառությունը փոխանցվեց ինձ էլ, երբ նրա աղջիկը՝ Լուսինը, ուրախ ու ժպտուն հայտարարեց.

— Բարեկամներ, թույլ տվեցեք ինձ ցուցադրել ասել ձեզ:

— Ժամը 16-ն է. ո՞ր եք գնալու այս ժամին, — հարցրի ես ժամացույցին նայելով:

— Երևան եմ գնալու. այս երեկո քննություն ունեմ ինստիտուտում, — զվարթ պատասխանեց նա և թիթեռնիկի պես թռվոտն դուրս խոյացավ:

Սովետաշենից մինչև Երևան էր գնում նա այսօր քննության ներկայանալու, ինչպես ամեն օր գնում է ուսում ու դիտություն ամբարներու, մտավոր բարձր մակարդակի հասնելու, Հայրենիքի արժանավոր դավակ դառնալու համար: Այսպե՛ս են մեր երկրի բոլոր երիտասարդները, աղջիկ լինեն՝ թե տղամարդ: Ի տես Հայաստանի ուսումնասեր, հաստատակամ, ապագայի մասին վստահ, դեպի լուսավոր բարձունքներ սլացող այս առողջ ու կայտառ երիտասարդության, ինչպե՛ս չափսոսալ արտասահմանի հայ երիտասարդության մասին, որի կյանքը իզուր փշանում է օտար երկրների վատասերիչ մթնոլորտում՝ կեղտոտ պարասրահների մեջ, վատառողջ գինետների սեղանների առջև:

Իրիկնամուտին, երբ ես պատրաստվում էի Երևան վերադառնալ, մեծ հաճույքով դիտեցի խոզերի երամակն և արջառների ու պաճառների հոտերը, որոնք պատկանում են Սովետաշենի կոլտնտեսության (նախագահ՝ աղբյամանցի Դավիթ Թուշարյան): Դրանք կենդանի փաստերն են կոլտնտեսականների բարեկեցության, որն օրավուր աճում և ամրանում է այս գյուղում՝ շնորհիվ ստեղծագործ աշխատանքի:

Մի անգամ ես ման գալով Սովետաշենի լայն ու մաքուր փողոցներում, տեսնելով ավանի պայծառ լույսերը, լսելով սպիտակ տների լուսամուտներից դուրս թափանցող խանդավառ ուղիղ հաղորդումները և իմանալով, որ ավանն ունի կինո և երկու արտելների երգիչներից կազմված երգեցիկ խումբ, ես ցավով հիշեցի թշուրքական և արարական գյուղերը, որտեղ գյուղացիները բնակվում են գոմերի և ախոռների մեջ, անասունների հետ կողք-կողքի, լուսավորվում են նավթի թիթեղե ճրագներով (մի բան, որից առաջանում է աչքերի տկարություն և այլ հիվանդություններ), խմում են ճահճաջուր ու փղորում մալարիայից, շնչում են փողոցում միկրոբալից օդ, սնվում են վայրի բանջարներով, խոտով ու առողջապահական հոգատարության բացակայության պատճառով թոքախտ են լինում:

Լուսինը բարձրացել էր Գեղամա սարերից վեր ու լույս էր ցողում համայնական դաշտերի վրա, երբ արագասույր տակսին ինձ հասցրեց մայրաքաղաք՝ Երևան:

(Շարունակելի)